ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.1768671
30-12-2025թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*
Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, 0097, ԱՋԱՓՆՅԱԿ,*
ՆՈՐԱՇԵՆ ԹՂՄ., 20, 21
artur.mikayelyan@hotmail.com : 37493500515

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի պարոն Մկրտչյան,

«Գիտակից հասարակություն» սոցիալ-իրավական կենտրոն ՀԿ-ն, իր գործունեության առանցքում ունենալով **պետական և հանրային շահի պաշտպանությունը**, իրականացնում է հանրակրթական համակարգի արդյունավետության, ենթակառուցվածքների և մարդկային ռեսուրսների բաշխման ուսումնասիրություն, նպատակ ունենալով բացահայտել ոլորտի առկա իրավիճակը և զարգացման ուղղությունները։

Այդ նպատակով խնդրում ենք տրամադրել Ձեր մարզի տարածքում գործող բոլոր տեսակի դպրոցներիի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

1. 2018 թվականի հունվարի մեկից մինչ օրս, ըստ տարիների, որ դպրոցներն են փակվել և որ համայնքներում,
2. Փակման պահին աշխատողների, այդ թվում՝ ուսոցիչների թիվը (առաջինը գրել ընդհանուր թիվը, ապա՝ ուսուցչական կազմի, օրինակ՝ 10/8)
3. Փակման պահին աշակերտների թիվը,
4. Փակման պատճառը, ինչպես նաև՝ իրավական հիմքը,
5. Այլ դպրոցի հետ միավորման/միաձուլման կամ նոր դպրոց կառուցելու դեպքում ՝ միավորված/միաձուլված/նոր դպրոցը
6. Նոր/միավորված/միաձուլված դպրոցի անվանումը, համայնքը, աշակերտների թիվը, աշխատողների, այդ թվում՝ ուսոցիչների թիվը (առաջինը գրել ընդհանուր թիվը, ապա՝ ուսուցչական կազմի, օրինակ՝ 10/8), ուսուցիչների թափուր հաստիքների թիվը 2025 թվականի դեկտեմբերի դրությամբ։

7. Նոր կառուցված դպրոցների դեպքում՝ կառուցման բյուջեն, ֆինանսավորման աղբյուրը, ժամկետները։

Տեղեկատվությունը խնդրում ենք տրամադրել էլեկտրոնային տարբերակով՝ կից ներկայացված Excel աղյուսակային ձևաչափով։

Ակնկալում ենք Ձեր աջակցությունը և համագործակցությունը՝ ուսումնասիրության համար անհրաժեշտ տվյալների տրամադրման հարցում։ Միաժամանակ, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ հարցման հետ կապված որևէ կետի լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտության դեպքում։

Հարգանքով՝

ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ԳԻՏԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ»

սոցիալ-իրավական կենտրոն ՀԿ նախագահ

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար։

Կից՝ 4 ֆայլ

Դիմող՝

ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ